

«ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2015թ. I-ին եռամսյակ

Հաշվապահական հաշվառումը «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ-ում (այսուհետ նաև՝ Ընկերություն) վարվել է ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի 2011թ. նոյեմբերի 30-ի թիվ 322-Ն Որոշմամբ հաստատված ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանին, Ներդրումային ընկերության կողմից հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան:

Ընկերության՝ 2015թ. հունվարի 1-ից մարտի 31-ը հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները կազմվել և իրականացվել են համաձայն «Հաշվապահական Հաշվառման մասին» ՀՀ Օրենքի, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների և գերատեսչական նորմատիվ այլ իրավական ակտերի:

Ընկերության ակտիվները, պարտավորությունները, սեփական կապիտալը, հաշվեկշռային հաշիվներում հաշվառելու նպատակով, Ընկերության ղեկավարությունն ընտրում և կիրառում է այնպիսի հաշվապահական հաշվառման քաղաքականություն, որ ֆինանսական հաշվետվությունների փաթեթը և նրանցում պարունակվող տեղեկատվությունը պարտադիր բավարարեն կիրառվող յուրաքանչյուր ստանդարտի բոլոր պահանջներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին:

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը բավարարում է հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների կազմման հետևյալ սկզբունքներին.

- *անընդհատության սկզբունք՝* Ընկերությունը շարունակելու է իր գործունեությունը տեսանելի ապագայում և միտում չունի լուծարվելու կամ կրճատելու իր գործունեության ծավալները:
- *արժանահավատության սկզբունք՝* ֆինանսական հաշվետվություններում ներկայացվող տեղեկատվությունը ճշմարիտ ներկայացնում է Ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև՝ արտացոլում է ոչ միայն իրավական կողմը, այլ նաև դեպքերի և գործառնությունների տնտեսական

բովանդակությունը, չեզոք է, գերծ կանխակալությունից, հաշվենկատ, ամբողջական բոլոր էական դրսևորումներում:

- *հաշվեգրման սկզբունք*՝ տնտեսական գործառնությունների և դեպքերի արդյունքները ճանաչվում և հաշվապահական հաշվառման մեջ գրանցվում են այն ժամանակ, երբ դրանք տեղի են ունեցել, անկախ դրանց հետ կապված դրամական միջոցների վճարման կամ ստացման ժամկետից, և արտացոլվում են այն ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են,

- *հասկանալիության սկզբունք*՝ ֆինանսական հաշվետվություններում պարունակվող տեղեկատվությունը պետք է հասկանալի լինի օգտագործողներին,

- *էականության և միասնականության սկզբունք*՝ ֆինանսական հաշվետվություններում յուրաքանչյուր էական հոդված պետք է ներկայացվի առանձին, իսկ ոչ էական հոդվածները՝ միավորված,

- *համադրելիության սկզբունք*՝ տարբեր ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունները պետք է համադրելի լինեն:

«ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ-ի կողմից ընտրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիման վրա կազմված ֆինանսական հաշվետվությունները բավարարում են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների և «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ Օրենքի պահանջներին և ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկատվությունը պարունակում է բավարար չափով ինֆորմացիա:

«ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ-ի հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն 2015թ.-ի ընթացքում տեղի չի ունեցել:

Սույնով հայտարարում ենք նաև, որ պատասխանատվություն ենք կրում.

1) Ընկերության ֆինանսական վիճակը (բոլոր էական առումներով) արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար, այն է՝

- ա) հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, իրավասու մարմնի կողմից հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,
- բ) հիմնավորված գնահատումներ, հաշվարկներ կատարելու համար,
- գ) ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների պահպանման, իսկ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում այդ շեղումների բացահայտման համար.

դ) հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,

ե) ֆինանսական հաշվետվությունները ընկերության գործունեության անընդհատության հիման վրա պատրաստելու համար,

2) Ընկերության ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, ՀՀ օրենսդրությանը և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգի ներդրման համար,

3) Ընկերության ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ՝ մեր իրավասությունների սահմաններում, միջոցներ ձեռնարկելու համար:

Գործադիր տնօրեն՝

Վաղինակ Մարտյան

Գլխավոր հաշվապահ՝

Նաիրա Մարգարյան